



EUROPEAN UNION



Գերմանիայի  
Դաշնային Հանրապետության  
դեսպանություն  
Երևան

**ԵՄ պատվիրակությունն ու Գերմանիայի դեսպանությունը կազմակերպում են մամլո ասուլիս – ֆիլմի ցուցադրում՝ նվիրված Մարդու իրավունքների օրվան**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Parada» ֆիլմի ցուցադրումը մեծ հետաքրքրություն առաջացրեց ՋԼՄ-ների շրջանում՝ Հայաստանում ԵՄ պատվիրակությունն ու Գերմանիայի դեսպանությունը հրավիրում են մամլո-ասուլիս, որը տեղի կունենա ս.թ. հոկտեմբերի 9-ին, ժամը 18.00-ին, ԵՄ պատվիրակության գրասենյակում: Մամլո-ասուլիսի ավարտին նախատեսվում է ֆիլմի ցուցադրությունը զանգվածային լրատվամիջոցների համար: Հոկտեմբերի 8-ին ծրագրված ցուցադրությունը կհետաձգվի և կվերածրագրավորվի մյուս էկրանավորումների հետ միասին հոկտեմբեր ամսվա ընթացքում:

Տեղերի սահմանափակության կապակցությամբ խնդրում ենք հաստատել մասնակցությունը ԵՄ պատվիրակության գրասենյակին: Նախապատվությունը կտրվի մասնակցությունը նախապես հաստատողներին՝ մինչև 40 տեղ: Լրագրողները պետք է զանգահարեն ԵՄ պատվիրակության գրասենյակ (10) 54 64 94-828 հեռախոսահամարով:

**Ընդհանուր տեղեկություններ**

Հայաստանում մարդու իրավունքների գիտակցության ամրապնդման նպատակով Երևանում Գերմանիայի դեսպանությունը և Եվրամիության պատվիրակությունը կազմակերպում են հանդուրժողականության և խտրականության բացառման թեմայով միջազգային ճանաչում գտած մի ֆիլմի ցուցադրությունների շարք:

«Parada» ֆիլմը սերբական դրամա է, որն արժարժում է Սերբիայում միասեռականների իրավունքների նուրբ խնդիրը: Ֆիլմի առանցքային թեման Բելգրադում միասեռականների հպարտության շքերթ կազմակերպելու երկրորդ փորձն է այն բանից հետո, երբ առաջինը 2001թ. ավարտվել էր բռնությամբ: Ֆիլմը միջազգային ճանաչում ձեռք բերեց՝ Էկրան բարձրանալով 2011թ. հոկտեմբերին: Այն հաջողությամբ ցուցադրվել է 2012թ. «Բեռլինալե» կինոփառատոնում՝ շահելով հանդիսատեսի մրցանակը լավագույն խաղարկային ֆիլմի համար:

Ֆիլմի ցուցադրությունը մասն է կազմում այն միջոցառումների, որոնք Եվրամիությունն անցկացնում է 2012թ. Մարդու իրավունքների պաշտպանության շրջանակում: Եվրամիությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունը հանդես են գալիս հանուն մարդու իրավունքների հարգման երաշխիքների՝ ներառյալ հանդուրժողականությունն ու ոչ խտրական վերաբերմունքը:

Ֆիլմը կցուցադրվի հոկտեմբեր ամսին տարբեր վայրերում.

հոկտեմբերի 10-ին՝ ժամը 20.00-ին, Ակումբում

Թումանյան 40, 0010 Երևան,

հոկտեմբերի 15-ին և 16-ին՝ ժամը 20.00-ին, Երևանի Հ. Թումանյանի անվան  
պետական տիկնիկային թատրոնում

Սայաթ-Նովա 4, 0001 Երևան: